

# ԱԶԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ՔՈՒԷՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: [prelacy@armenianprelacykw.org](mailto:prelacy@armenianprelacykw.org)

*ՆՈՐ ՇՐՋԱՆ, Ը. Տարի, Թիւ 354, Ուրբաթ, 07 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2016*

*ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ*

## ՔՈՒԷՅԹԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ

Հինգշաբթի, 6 Հոկտեմբեր, 2016-ին, Քուեյթի Ազգային Վարժարանի շրջափակէն ներս, տօնական ջերմ մթնոլորտի մը մէջ տեղի ունեցաւ 2016-2017 տարեշրջանի բացման պաշտօնական արարողութիւնը, ներկայութեամբ՝ Քուեյթի եւ Շրջակայից Հայոց Թեմի Առաջնորդ Գերայ. Տէր Մասիս Ծ. Վրդ. Զօպույեանի, Քուեյթի մօտ ՀՀ դեսպան Տիար Մանուէլ Բաղէեանի եւ ազնուափայլ տիկնոջ, ազգային մարմիններու ներկայացուցիչներու, Ազգային Վարժարանի Հոգաբարձութեան եւ Տնօրէնութեան, ուսուցիչներուն եւ աշակերտութեան:



Գեղեցիկ զուգադիպութեամբ մը նոյն օրը վարժարանս նշեց նաեւ Սրբոց Թարգմանչաց եւ ուսուցչաց տօները:

Հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ Քուեյթի եւ ՀՀ քայլերգներով, որոնք հնչեցին վարժարանի աշակերտութեան քաղոր շրթունքներէն: Այնուհետեւ վարժարանի 12-րդ կարգի աշակերտուհի Նաթալին Թաշճեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ըսաւ.- «Հայ դպրոցը՝ Ազգային Վարժարանը, մեզի համար միտքի եւ հոգիի դարբնոց է: Կը հարստացնէ մեզ գիտելիքներով եւ կ'օգնէ ըլլալ աւելի լաւ մարդ ու ապրիլ ճիշդ կեանքով: Այսօր, մենք կը նշենք նաեւ ուսուցչաց տօնը, գեղեցիկ առիթ մը, որուն ընթացքին մեր երախտագիտութիւնը կը յայտնենք կրթութեան եւ գիտութեան մշակներուն, անոնց, որոնք իրենց համակ ժամանակն ու կարողութիւնները կը

ծայառեցնեն մեզ դաստիարակելու սրբազան գործին: Այսօր, սիրելի ուսուցիչ-ուսուցչուհիներ, ձեր ձեռքերը սեղմելով անկեղծորեն կ'ըսենք ձեզի՝ ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ»:

Յաջորդիվ վարժարանի աշակերտներուն կողմէ ներկայացուեցաւ գեղեցիկ ու ճոխ գեղարուեստական յայտագիր մը:

Ազգային Վարժարանի տնօրէն՝ տօքթ. Ներսէս Սարգիսեան խօսք առնելով, բարի գալուստ մաղթեց ներկաներուն, ապա շեշտեց, որ հայ դպրոցը հոգեմտաւոր կրթութեան ու հայեցի դաստիարակութեան կեդրոն է, ուր կը պատրաստուին այնպիսի երիտասարդներ, որոնք հետագային պիտի ծառայեն իրենց ընկերութեան ու Հայրենիքին:



Պրն. Տնօրէնը հրաւիրեց ՀՀ դեսպանը փոխանցելու իր սրտի խօսքը:

Մեծարգոյ դեսպանը իր կարգին ջերմօրէն ողջունեց բոլորին եւ շնորհաւորական իր խօսքը փոխանցեց վերամուտի առթիւ ու կարեւորեց հայ մանկավարժի դեր հայ իրականութեան մէջ:

Աւարտին հայրական խօսքն ու օրհնութիւնը փոխանցեց Թեմիս բարեջան Առաջնորդ Գերպ. Տէր Մասիս Ծ. Վրդ Զօպույեան: Ան իր կարգի շնորհաւորեց տնօրէնութիւնն ու ուսուցչաց կազմը վերամուտի առթիւ եւ իր գոհունակութիւնը յայտնեց ի տես հայկական վարժարանին մէջ հասակ առնող սերունդին, յաջողութիւն մաղթեց բոլոր աշակերտներուն եւ յանձնարարեց շարունակել հաւատալ հայ դպրոցի առաքելութեան, որովհետեւ հայ դպրոցներուն բարգաւաճումով է, որ ազգային կեանքը պիտի շէնսայ ու յառաջդիմէ:



## **ՄՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ԱՅՑԸ ՔՈՒԷՅԹԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆ**

Չորեքշաբթի, 5 Հոկտեմբեր 2016-ին, առաւօտեան ժամը 12:00-ին, Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի տեսչութեան անձնակազմը յատուկ այցելութիւն մը տուաւ վարժարանիս ու հանդիպեցաւ տնօրէն՝ տօքթ. Ներսէս Սարգիսեանի հետ իր գրասենեակէն ներս:

Տեսչութեան անդամները շնորհաւորեցին Պրն. տնօրէնը վերամուտի առթիւ ու մաղթեցին ուսումնական հեզասահ տարեշրջան մը, ապա քննարեցին շարք մը հարցեր: Աւարտին Պրն. Տնօրէնը շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն իրենց ազգանուէր ու անշահախնդիր աշխատանքին համար:



## **ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔՈՒԷՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԵՏ**

Կիրակի, 2 Հոկտեմբեր, 2016-ին, առաւօտեան ժամը 11:00-ին, Քուէյթի Ազգային Վարժարանի տնօրէն՝ Տօքթ. Ներսէս Սարգիսեան ընկերակցութեամբ՝ հոգաբարձական կազմի անդամներուն այցելեցին թեմիս առաջնորդ՝ Գերպ. Տ. Մասիս Ծ. Վրդ. Զօպոյեանին, Քուէյթի ազգային առաջնորդարանէն ներս:

Հանդիպման ներկայ գտնուեցաւ նաեւ Ազգային վարչութեան Ատենապետ՝ Տիար Մունիր Դարբինեան:

Դպրոցական վերամուտի առիթով կայացած այս այցի նպատակն էր՝ քննարկել վարժարանիս ուսումնական ու կրթական ընդհանուր վիճակը, նաեւ ներկայացնել դպրոցի բարեկարգման նպատակով առնուած նորարար քայլերն ու ծրագիրները:



Ջերմ ու սիրալիր հանդիպման ընթացքին, առաջնորդ Հայր Սուրբը իր ամբողջական զօրակցութիւնն ու աջակցութիւնը յայտնեց ներկաներուն մաղթելով բարեյաջող ընթացք ու հեզասահ ուսումնական տարի մը:

## **ՅԱՏՈՒԿ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՔՈՒԷՅԹԻ ՄՕՏ ՀՀ ԴԵՍՊԱՆ ՊՐՆ. ՄԱՆՈՒԷԼ ԲԱԴԷՅԵԱՆԻՆ**

Կիրակի, 2 Հոկտեմբեր, 2016-ին, Քուէյթի Ազգային Վարժարանի տնօրէն՝ Տօքթ. Ներսէս Սարգիսեան եւ վարժարանիս հոգաբարձական կազմը այցելեցին Քուէյթի մօտ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Պրն. Մանուէլ Բադէյեանին:

ՀՀ դեսպանատան մեջ կայացած հանդիպման ներկայ գտնուեցաւ նաեւ ՀՀ հիւպատոս Պրն. Լեւոն Պետրոսեան:



Պրն Տնօրէնը վարժարանիս մասին պատմական ակնարակ մը կատարելէ եւ այսօրուան իրավիճակը ներկայացնելէ ետք՝ քննարկուեցան շարք մը հարցեր, որոնց ամենահրատապը վարժարանիս շրջանաւարտներուն ՀՀ համալսարաններուն մէջ բարձրագոյն կրթութիւնը շարունակելու թեման էր: Այս առթիւ քննարկուեցաւ մշակել ծրագիրներ աւելի հեզասահ ընթացք ապահովելու համար վարժարանիս շրջանաւատ ուսանողներուն:

Հանդիպման ընթացքին արծարծուեցաւ նաեւ հայոց լեզուի դասաւանդման գծով հայրենիքէն օգտուելու հնարաւորութիւններու մասին:

## **ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԵՒ ԴՐՕՇԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՆԿԱԽԱՑՄԱՆ 25 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ**

Հանդիսապետութեամբ՝ Թեմիս բարեջան առաջնորդ Գերպ. Տէր Մասիս Ծ. Վրդ. Զօպոյեանի, Ուրբաթ, 23 Սեպտեմբեր, 2016-ին Սրբոց Վարդանանց Եկեղեցոյ մէջ յաւարտ Սուրբ եւ Անմահ Պատարագին, տեղի ունեցաւ Գոհարանական Մաղթանք եւ Դրօշակի օրհնութիւն: Պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Թեմիս Առաջնորդը: Ան իր խօսքին մէջ վեր առաւ հայրենիքին դերը եւ կարեւորեց սփիւռքի մասնակցութիւնը հայրենաշինութեան գործին: Պատարագին ներկայ էին՝ Քուէլթի մօտ ՀՀ նորանշանակ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Տիար Մանուէլ Բաղէեանն ու ազնուափայլ տիկինը, ազգային մարմիններու եւ միութեանց ներկայացուցիչներ, ազգայիններ եւ մեծ թիւով հաւատացեալներ:



շնորհաւորանքները:

Աւարտին՝ եկեղեցոյ շրջափակին մէջ տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն: Հաւատաց-եալներու միահամուռ հնչիւններուն ներքոյ հնչած Ազգային Օրհներգի՝ «Մեր Հայրենիքի» ժամանակ բակին մէջ ծածանեցաւ Հայաստանի Հանրապետութեան խորհրդանիշներէն՝ հայոց եռագոյնը:

Այնուհետեւ Առաջնորդարանի «Արարատ» սրահէն ներս, Գերպ. Հայր Սուրբն ու ՀՀ Դեսպանը ՀՀ Անկախութեան առթիւ ընդունեցին քուէթահայերու

**ՀԱՅԿԱԿԱՆ**

**Ռուստամեան. «Արդիւնքները Լաւ Չեն, Եւ Այդ Պատճառով Ամէն Մէկը Պատասխանատուութեան Իր Բաժինը Պէտք է Ունենայ»**

ՀՅԴ Բիւրոյի քաղաքական ներկայացուցիչ, Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցութեան ղեկավար Արմէն Ռուստամեան 5 Հոկտեմբերին լրագրողներուն հետ ունեցած գրոյցին ընթացքին յայտնած է, որ Հայաստանի վարչապետ Կարէն Կարապետեան անկաշկանդ կերպով ձեւաւորած է կառավարութեան կազմը:

«Վստահ եմ՝ այս սկզբնաւորման վիճակին մէջ վարչապետին համար ստեղծուած են համապատասխան դիրքին պայմաններ, որ կարենայ այն վճռականութեամբ, որ ստանձնած է այս պաշտօնը, լուծել երկրին առջեւ ծառայած խնդիրները», դիտել տուած է ան:



Անդրադառնալով Դաշնակցութեան ստանձնած նախարարութիւններու փոփոխութեան՝ Ռուստամեան յայտնած է, որ իրենք նախարարութեան թիւ, տեսակի հարց չեն առաջադրած երբեւիցէ: «Մեր հարցը եղած է կապուած այն համագործակցութեան յուշագիրի նպատակներուն հետ, որոնք միասին համաձայնեցուցած ենք, եւ մեր հարցը այն է, որ այդ ուղղութեամբ կատարուին կարելի եղածին չափ արագ եւ արդիւնաւէտ քայլեր», ընդգծած է ան:

Պատասխանելով այն հարցումին, թէ Հանրապետական կուսակցութեան հետ համախոհութիւն գոյացնելէ առաջ ալ ընտրութիւններուն Դաշնակցութիւնը ունէր նոյն տոկոսները, արդեօք տեղական ինքնակառավարման ընտրութիւններուն պարագային այս համագործակցութիւնը ի շահ Դաշնակցութեան էր, թէ ի վնաս անոր, Ռուստամեան ըսած է. «Չեմ կարծեր, որ այդ ամէնը համագործակցութեան հետ կապուած է: Այն խնդիրները, որոնք մենք դրած էինք, չենք հրաժարած անոնցմէ՝ անկախ անկէ, թէ ո՛ր կը գտնուինք, այդ խնդիրները մեզի համար կարեւոր են՝ ըլլանք իշխանութեան մէջ, թէ՛ իշխանութենէն դուրս: Այստեղ տեղի հարցը այդքան ալ կարեւոր չէ: Եղաւ այն, ինչ կայ, համագործակցութեան հետ չենք կապեր այդ ամէնը: Մեզի համար այդ համագործակցութեան նպատակներն են կարեւոր»:

Խօսելով յաւելումներու կիրարկման մասին՝ Ռուստամեան ըսած է, որ արդիւնաւէտ չի նկատեր ատիկա: «Արդարացուած չէ: Մենք այն ժամանակ ալ դէմ եղած ենք անոր, երբ Երեւանի մասին օրէնք կ'ընդունուէր, մենք կ'ըսէինք, որ ատիկա սխալ է: Մենք կրցանք ընել ամէն ինչ, որ այդ յաւելումները չկիրարկուին Ազգային ժողովի ընտրութիւններուն ժամանակ, նոյն պատկերը կրնար յառաջանալ: Ոմանք զարմացած են ատկէ ու լաւ չեն հասկցած՝ ինչ ընդունուած է: Հիմա իսկապէս այդ յաւելումներու կիրարկումով մեծամասնութիւն ձեռք բերած է այն քաղաքական ուժը, որ քառասուն առ հարիւրէ աւելի ձայն ունի, բայց յաւելումներու կիրարկումը մենք ժողովրդավարական չենք նկատեր: Միւսներու հաշուոյն ատիկա կը կատարուի», դիտել տուած է ան:

Պատասխանելով այն հարցումին, թե իսկապե՞ս Շիրակի մարզպետին դժգոհություններ կան՝ Ռուստամեան նշած է. «Հիմա արդիւնքները լաւ չեն, ակնյայտ է, արդիւնքներուն համար պէտք է լուրջ վերլուծութիւն կատարել, եւ ամէն մէկը պատասխանատուութեան իր բաժինը այդ արդիւնքներուն մէջ ունենայ, ասիկա բնական ընթացքն է եւ չեմ կարծեր, որ արտառոց բան կայ անոր մէջ: Մենք պարզապէս պարզ հայեացքով կը նայինք այն հարցերուն եւ չենք երթար մեր մեղքը ուրիշներու վրայ բարդելու ճամբով, հազար բան կարելի էր ըսել, բայց մենք գիտենք, որ գլխաւոր պատճառը այն է, որ մենք հարց ունինք եւ մեր մէջ եղած հարցը օր առաջ պէտք է լուծենք»:

## **Պունտրսթակի Փոխնախագահ Զինկհամեր. «Հայոց Գեղասպանութեան Ճանաչման Վերաբերեալ Պունտրսթակի Որոշումը Վերջնական է Եւ Անփոփոխ»**

Պունտրսթակի փոխնախագահ Եռհաննէս Զինկհամերի համոզումով՝ Պունտրսթակի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման վերաբերեալ բանաձեւի որդեգրումը ճիշդ որոշում էր:



Ան Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին մէջ «Արմէնփրես»-ի հետ զրոյցի մը ընթացքին յայտնած է. «Այո՛, Գերմանիոյ խորհրդարանին մէջ մենք որոշեցինք առաջադրել ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւը եւ շատ երկար քննարկումներէ ետք զայն ընդունեցինք: Ըստ իս, ասիկա քայլ մըն էր դէպի ճշմարտութիւն, իսկ ճշմարտութիւնն ալ մէկ քայլ առջեւ՝ դէպի խաղաղութիւն, այսինքն՝ ասիկա խաղաղութեան հասնելու միտումնաւ քայլ էր: Արդէն շուրջ 100 տարի անցած է. կը կարծեմ՝ արդէն ժամանակն էր ասիկա ընելու: Մենք պիտի կարենանք երթալ դէպի ապագայ, եթէ յիշենք անցեալը: Ասիկա անհրաժեշտութիւն է»:

Պատասխանելով այն հարցումին, թե ի՞նչ կը կարծէ բանաձեւի որդեգրման վերաբերեալ Թուրքիոյ արձագանգին մասին, յատկապէս վերջին զարգացումներէն ետք, երբ Թուրքիա Գերմանիայէն պահանջած էր յետքայլ կատարել Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող Պունտրսթակի բանաձեւէն, Գերմանիոյ խորհրդարանի փոխնախագահը պատասխանած է. «Գերմանիոյ խորհրդարանին մէջ տուած մեր որոշումը վերջնական է, եւ մենք պիտի չփոխենք զայն»:

Միւս կողմէ, երեքշաբթի օր Թուրքիոյ Ինճիրլիք ռազմակայան այցելած Պունտրսթակի պաշտպանութեան յանձնախումբի պատուիրակութեան անդամներէն երեսփոխան Քարլ Լամերս ռազմակայան այցելելէ առաջ զերմանական «Յայթ Անլայն» պարբերականին հետ զրոյցի մը ընթացքին վերահաստատած է Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու հարցին մէջ իր դիրքորոշումը՝ անելցնելով, որ այդ բանաձեւը չունի պարտադիր բնոյթ:

«Դաշնակցային խորհրդարանը իրատուօրէն ունի իր տեսակետները յայտնել բոլոր կարեւոր հարցերուն մէջ: Մենք ասիկա կատարած ենք եւ ատոր թիկունք կանգնած ենք», ըսած է Լամերս՝ ընդգծելով, որ երեսփոխաններուն Ինճիրլիք ռազմակայան այցելութիւնը կարեւոր է երկու կողմերու յարաբերութիւններու կարգաւորման տեսանկիւնէն:

## Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության Բանակ. «Գիշերը Ազրպեյճանական Զինուժը DSHK Տիպի Գնդացիի Կիրարկած Է»

4-էն 5 Հոկտեմբերի լուսցող գիշերը ղարաբաղեան-ազրպեյճանական հակամարտ գորքերու սահմանագիծին վրայ հակառակորդին կողմէ զինադադարը խախտուած է աւելի քան 40 անգամ, որուն ընթացքին, տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներէ հայ դիրքապահներու ուղղութեամբ արձակուած է մօտ 4000 կրակոց:

Առաւել բուռն կրակոցներ արձակուած են շփման գիծի հիւսիսային ուղղութեամբ: Նշուած հատուածին մէջ միայն DSHK տիպի խոշոր տրամաչափի գնդացիի արձակուած է աւելի քան 500 կրակոց:

Հակառակորդին նախայարձակ աշխուժութիւնը ճնշելու համար պաշտպանութեան բանակի յառաջապահ զօրամասերը դիմած են պատասխան գործողութիւններու՝ շարունակելով լիակատար վերահսկողութիւն պահպանել առաջնագիծին վրայ, կը յայտնէ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության նախարարութեան մամլոյ ծառայութիւնը:

## Վարչապետ Կարէն Կարապետեան. «Պէտք Է Անոնց Մէջէն Ընտրենք Մարդոց, Որոնք Առաքելութիւն Կը Կատարեն»

5 Հոկտեմբերին կառավարութեան հետ հարցուպատասխանի ընթացքին Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցութեան պատգամաւոր Կարէն Շահմուրադեան մէջբերած է վարչապետին այն յայտարարութիւնը, որուն համաձայն, մարդուժի փոփոխութիւնները պէտք է կատարուին արհեստավարժութեան հիման վրայ: Պատգամաւորը դիտել տուած է, որ միշտ ալ դժուար եղած է արհեստավարժ մարդուժ գտնել, քանի որ անոնք հիմնականին մէջ կ'աշխատին սեփական հատուածին մէջ՝ ստանալով բարձր աշխատավարձ: «Ինչպէ՞ս պէտք է այդ մարդուժը համոզեն աշխատելու պետական մարզին մէջ», հարցուցած է պատգամաւորը:



Վարչապետ Կարէն Կարապետեան պատասխանած է. «Պայմանաւորուած էինք, չէ՞, անկեղծ խօսիլ: Չեմ գիտեր, իրապէս, չեն գիտեր, թէ ինչպէ՞ս այդ մարդուժը պէտք է համոզել: Պէտք է անոնց մէջէն ընտրենք այն մարդոց, որոնք առաքելութիւն կը կատարեն, եւ այսօր խօսիլ պետական ծառայողի աշխատավարձին մասին, երբ բազմաթիւ չլուծուած խնդիրներ կան, ճիշդ չ'ըլլար», ըսած է վարչապետը՝ աւելցնելով, որ յառաջիկային պէտք է անդրադառնան պետական կառավարման կազմի արդիւնաւէտ աշխատանքի հարցին, հակառակ պարագային, որակեալ կառավարիչներ կարելի չէ ունենալ:

**WWW.AZTAGDAILY.COM**

## Պունտրսթակի Պատուիրակությունը Թուրքիոյ Մէջ Անդրադարձած Է Հայոց Ցեղասպանութեան Խնդիրին

Թրքական «Իհլաս» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ Ինճիրլիքի ռազմակայան այցելութեան ծիրին մէջ Թուրքիա գտնուող Պունտրսթակի պատուիրակութիւնը եւ թուրք պաշտօնատարներ անդրադարձած են նաեւ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւին:



Պունտրսթակի պաշտպանութեան յանձնախումբի անդամներէն կազմուած պատուիրակութիւնը Ինճիրլիք մեկնելէ առաջ հիւրընկալուած է Թուրքիոյ խորհրդարանին մէջ, ապա Գերմանիոյ դեսպանատունը մամլոյ ասուլիս կազմակերպած է:

«Էրմենիհապեր» կը հաղորդէ, որ մամլոյ ասուլիսին ընթացքին Գերմանիոյ խորհրդարանի պաշտպանութեան հարցերով յանձնախումբի

փոխնախագահ Քարլ Լամերս նշած է, որ Թուրքիոյ խորհրդարանին մէջ տեղի ունեցած հանդիպումին ընթացքին քննարկուած է նաեւ Պունտրսթակի որդեգրած ցեղասպանութեան բանաձեւը:

Ան նշած է, որ Թուրքիոյ խորհրդարանի նախագահ Քահրամանի եւ Պունտրսթակի նախագահ Լամերսի միջեւ կատարուած նամակագրութեան մը մէջ եւս անդրադարձ կատարուած է տուեալ խնդիրին: Փոխնախագահը յոյս յայտնած է, որ այդ նամակագրութեան մէջ տեղ գտած տեսակետները այսուհետեւ հայկական բանաձեւի հարցին մէջ դրական զարգացումներու հիմք պիտի հանդիսանան:

«Իբրեւ խորհրդարան՝ դաշնակցային խորհրդարանը, բնականաբար, իրաւունք ունի որոշակի դիրքորոշում ունենալու 100 տարի առաջ տեղի ունեցած այդ դէպքերուն վերաբերեալ: Մենք կը հաւատանք, որ ապագային պէտք է նայիլ՝ ելլելով ինքնին այդ որոշումին սկզբունքներէն, եւ պէտք է միջոցներու ձեռնարկել, որպէսզի այդ դէպքերը այլեւս չկրկնուին», ըսած է Լամերս: Ան նաեւ յոյս յայտնած է, որ նշեալ սկզբունքով շարժելու պարագային կարելի պիտի ըլլայ կողմերուն միջեւ դրական երկխօսութիւն ձեւաւորել:

Լամերս նշած է նաեւ, որ Թուրքիոյ խորհրդարանին մէջ տեղի ունեցած հանդիպումին ընթացքին Թուրքիոյ ազգային պաշտպանութեան յանձնախումբի նախագահ Եուսուֆ Պայազըթ կարծիք յայտնած է, թէ հայկական հարցը կը շահարկուի տարբեր քաղաքական նպատակներով: Ատոր ի պատասխան՝ գերմանացի պաշտօնատարը յիշեցուցած է, որ դաշնակցային խորհրդարանը իրաւունք ունի տուեալ հարցին վերաբերեալ որոշակի քաղաքական մօտեցում դրսևորելու:

«Ո՛չ դաշնակցային խորհրդարանը, ո՛չ ալ կառավարութիւնը այս հարցին մէջ հակառակ կարծիք արտայայտած են: Թուրքիան, ինչպէս նախապէս, կը շարունակէ պնդել, որ խնդիրը ուսումնասիրուի պատմաբաններու կողմէ: Իսկ մենք նշեցինք, որ այս հարցին մէջ խորհրդարանները եւս խօսքի իրաւունք ունին», ըսած է Լամերս:



**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ**

**«Սուրիոյ Տագնապը Կարելի Չէ Լուծել Առանց Ռուսիոյ Եւ Միացեալ Նահանգներու Միջեւ Համաձայնութեան» Ըսաւ Շեֆըր**

ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարթին Շեֆըր յայտարարած է, որ Սուրիոյ տագնապին լուծումը անկարելի է առանց Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներու միջեւ համաձայնութեան:



«Յստակ է, որ Սուրիոյ խնդիրին մէջ առանց Միացեալ Նահանգներու եւ Ռուսիոյ միջեւ փոխըմբռնման հասնելու տագնապին լուծման եւ արինահեղութեան դադրեցման յոյս պիտի չըլլայ», ըսած է ան:

**«Թրքական Ուժերը Հիւսիսային Իրաքի Մէջ Պահելը Կրնայ Շրջանային Պատերազմի Առաջնորդել» Ըսաւ Իրաքի Վարչապետը**

Իրաքի վարչապետ Հայտար Ապատի զգուշացուց Թուրքիան, որ իր ուժերը հիւսիսային Իրաքի մէջ պահելը կրնայ «շրջանային պատերազմի» առաջնորդել:

Ապատի մեկնաբանեց Թուրքիոյ խորհրդարանի անցեալ շաբաթ որդեգրած որոշումը, որ յաւելեալ տարիով մը կ'երկարաձգէ թրքական բանակին Իրաքի եւ Սուրիոյ մէջ ահաբեկչական կազմակերպութիւններու դէմ զինուորական գործողութիւն կատարելու արտօնութիւնը՝ մտավախութիւն յայտնելով, որ «թրքական արկածախնդրութիւնը» վերածուի շրջանային պատերազմի:

Ան աւելցուց, որ թրքական ղեկավարութեան վարուելակերպը «անընդունելի է»՝ նշելով, որ ինք չ'ուզեր Թուրքիոյ հետ զինուորական բախումի մէջ մտնել:

Նախքան այդ, Իրաքի արտաքին գործոց նախարարութիւնը Մուսուլի ազատագրութեան վերաբերեալ թրքական յայտարարութիւններուն հարցով իր մօտ կանչեց Պաղատի մէջ Թուրքիոյ դեսպանը, ինչպէս նաեւ Անգարայի մէջ իր դեսպանը: Թրքական դիւանագիտական աղբիւրներ «Անատոլու» լրատու գործակալութեան յայտնեցին, որ թրքական արտաքին գործոց նախարարութիւնը Անգարայի մէջ Իրաքի դեսպան Հիշամ Ալի Աքպար Իպրահիմ Ալլատին իր մօտ կանչած է Իրաքի խորհրդարանին կողմէ Թուրքիոյ ամբաստանութիւններ ուղղող որոշումի մը որդեգրումին դէմ բողոքելու համար:

Իրաքի խորհրդարանը միաձայնութեամբ մերժած էր թրքական ուժերուն իրաքեան հողերուն վրայ ներկայութիւնը՝ պահանջելով Իրաքի դեսպանը տուն կանչել Անգարայէն եւ վտարել Իրաքի մէջ Թուրքիոյ դեսպանը:

Խորհրդարանը մերժած էր թրքական ուժերուն Իրաքի մէջ կեցութեան երկարաձգման թրքական որոշումը եւ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի՝ Մուսուլին վերաբերող յայտարարութիւնները, ինչպէս նաեւ կառավարութեան կոչ ուղղած էր՝ խզելու Թուրքիոյ հետ տնտեսական յարաբերութիւնները եւ դադրեցնելու իրաքեան քարիւղի թրքական հողերուն ճամբով արտածումը:



Յիշեցնենք, որ Իրաքի կառավարութիւնը դեկտեմբեր 2015-ին Թուրքիոյ 48 ժամուան պայմանաժամ ճշդած էր իր ուժերը Իրաքէն հեռացնելու՝ սպառնալով օգտագործելու իր տրամադրութեան տակ գտնուող բոլոր միջոցները, ներառեալ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդին դիմելու ընտրանքը:

Թրքական «Հիւրքիլէթ» օրաթերթը հաղորդեց, որ ՏԱՀԵՇ-ի դէմ պայքարի միջազգային դաշինքին մէջ Միացեալ Նահանգներու բանբեր գնդապետ Ճոն Տորիըն Իրաքի մէջ թուրք զինուորներու ներկայութիւնը նկատած է անօրինական:

«Իրաքի տարածքին գտնուող թրքական բանակը իրաքեան կառավարութեան արտօնութեամբ չէ եկած եւ անօրինական է», ըսած է Տորիըն: Ան յիշեցուցած է, որ միջազգային դաշինքի ծիրին մէջ միւս ուժերն ու երկիրները Իրաքի տարածքին մէջ կը գտնուին այդ երկրին արտօնութեամբ:

«Այս ուժերը ՏԱՀԵՇ-ի դէմ պայքարին մէջ ցամաքէն եւ օդէն պիտի աջակցին Իրաքի բանակին», ըսած է ամերիկացի գնդապետը:

## **Իրանի Յեղափոխական Պահակագունդը Սէուտական Մարտանաւերը Կը Զգուշացնէ Իրանեան Զուրերուն Մօտենալէ**

Իրանի Յեղափոխական պահակագունդը յայտարարութիւն մը հրապարակելով Սէուտական Արաբիոյ ծովուծի մարտանաւերը զգուշացուց իրանեան զուրերուն մօտենալէ՝ նշելով, որ սէուտական ծովուծին կատարած ռազմափորձերը «լարուածութիւն պիտի պատճառեն եւ քայքայեն ծոցի կայունութիւնը»:



Նշենք, որ սէուտական ծովուծը Արաբական ծոցին, Հորմուզի ջրանցքին եւ Օմանի ծովուն մէջ կը կատարէ «Օոցի վահան-1» ռազմափորձը, որուն ընթացքին իսկական ռումբեր եւ փամփուշտներ կ'օգտագործուին:

Սէուտական ռազմափորձին կը մասնակցին մարտանաւեր, արագընթաց նաւեր, պատերազմական օդանաւեր եւ նաւազներ:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

## Մինչև Ո՞ւր Զիջիլ

Ազգային մեր առօրեային մեջ կը հանդիպինք այնպիսի երեւոյթներու, որոնց հանդէպ լուռ եւ անտարբեր մնալ կարելի չէ այլեւս: Լռութիւնը հաւանութեան նշան է, իսկ հաւանութիւնը յաճախ համակերպումի եւ զիջումի արտայայտութիւն է:

Դեռ մինչև ո՞ւր զիջիլ եւ ի՞նչ գնով: Ամէն ինչ կարելի չէ զիջիլ, մանաւանդ երբ հարցը կը վերաբերի արժէքներու, որոնց կորուստը հայեցի մեր դիմագիծը կը խաթարէ եւ ազգային մեր ինքնութիւնը կը վտանգէ:

Վերջերս ընդհանրացած երեւոյթներէն մէկը հայ մամուլին մէջ օտար ծանուցումներու հրապարակումն է: Երեւոյթը կրնար մասամբ ընդունելի ըլլալ, եթէ ծանուցողը ըլլար օտար հաստատութեան մը մէկ ներկայացուցիչը, որ փափաքէր լիբանանեան բոլոր թերթերու մէջ միաժամանակ միեւնոյն ծանուցումը տպուած տեսնել: Մակայն, երբ ծանուցողը հայկական վարժարան մը, միութիւն մը կամ համալսարանական խմբաւորում մըն է, եւ ծանուցումը ուղղուած է հայ մարդոց, ինչո՞ւ գրել եւ ծանուցել օտար լեզուով: Եթէ մեր վարժարանները, միութիւնները եւ համալսարանականները իրե՛նք տէր պիտի չկանգնին մայրենիին, ո՞վ պիտի կանգնի:

Հայ լեզուի պաշտպանութիւնը եթէ տեղէ մը պէտք է սկսիլ, նախ դպրոցներէն ու միութիւններէն պէտք է սկսիլ: Մամուլը պիտի աջակցի անոնց եւ ոչ թէ մեղսակից ըլլայ ընդհանուր նահանջին՝ իր էջերուն մէջ տեղ տալով նման ծանուցումներու: Հայ թերթը կարդացողը հայ մարդն է, օտարը չէ: Եթէ անպայման օտար ծանուցում հրատարակելու անհրաժեշտութիւնը կայ, զայն պէտք է տպել օտար թերթի մէջ, որպէսզի օտարները կարդան եւ հասկնան: Այլապէս, նիւթականի եւ ճիգի անիմաստ վատնում է, քաղքենիութիւն եւ շփացածութիւն է հայ ընթերցողին՝ հայ դպրոցին, հայկական միութեան կամ երաժշտական մէկ ելոյթին մասին օտար լեզուով քարոզչութիւն կատարելը:

Երկրորդ երեւոյթը, որուն կ'արժէ անդրադառնալ, ուրախ թէ տխուր առիթներով մեր այլասերումն է, այլափոխումը, աւելի պարզ՝ օտար բարքերու որդեգրումը: Այս պարագային ընելիք ունի նաեւ եկեղեցին: Շատ յաճախ ներկայ կը գտնուինք պսակներու, որոնց աւարտին ներկաները եկեղեցւոյ մէջ նորապսակներուն կը ծափեն, անոնց վրայ ծաղիկի փերթեր կը թափեն եւ կամ ուրախութեան բացազանչութիւններով եկեղեցւոյ սրբութիւնը կը պղծեն: Օտարոտի այս երեւոյթները ե՞րբ եւ ինչպէ՞ս մուտք գործած են մեր մէջ: Հաւանաբար խառն ամուսնութիւններով՝ ըստի: Մակայն ճիշդ չէ արդարացումը եւ անվերջ համակերպումը, արտօնելով, որ նման երեւոյթներ շարունակուին: Տակաւին չենք անդրադառնար նորածինի մը գալուստը ողջունող «պէլյպի շաուրը»-ներուն, ամուրիութեան հրաժեշտ տուող «պէշլըր փարթի»-ներուն, «պրայտըլ շաուրը»-ներուն եւ այն միւսներուն, որոնք օրէ օր աւելի կ'ընդօրինակուին եւ կը տարածուին մեր մէջ:

Կայ նաեւ տխուր առիթներու՝ յուղարկաւորութիւններու պարագան: Վերջին տարիներուն նորութիւն են յուղարկաւորութեան թափօրները... երաժշտութեամբ կատարելը, ինչ որ խոտոր կը համեմատի հայկական բարքերուն: Մեր յուղարկաւորութիւնները ունին իրենց զուսպ ու պատշաճ, եկեղեցական յատուկ կարգն ու կանոնները, իսկ անոնցմէ դուրս՝ բարձր երաժշտութիւն սփռելը եւ ինքնաշարժներով փողոցները շրջիլը հայկական չէ, հարազատ չէ:

Կար ժամանակ, երբ յուղարկաւորութիւններու ժամանակ հրացանաձգութիւն կը կատարուէր, հիմա նորոյթը պայթուցիկ պայթեցնելն է: Յուղարկաւորութեան ամբողջ տեւողութեան, ննջեցեալը տունէն եկեղեցի տանելու ճամբուն վրայ, պայթուցիկ կը պայթեցուի եւ «Տէ՛ր, ողորմեա՛»-ի երաժշտութեան սփռումին խառնուելով՝ ականջ կը իլացնէ, ահ ու սարսափ կը ստեղծէ եւ սրտաճմլիկ պատկեր մը կը պարզէ: Հայկական յուղարկաւորութիւնները այսպէս չեն ըլլար ու պէտք չէ ըլլան: Հարկ է կտրուկ կերպով արգիլել նման երեւոյթներու ընդհանրացումը մեր մէջ:

Անշուշտ, եկեղեցւոյ չափ պահանջկոտ պէտք է ըլլալ նաեւ մեր դպրոցներէն, որոնք ազգային սովորութիւններու, մշակոյթի եւ արժէքներու գլխաւոր պահապանը կոչուած են ըլլալու: Բայց հոն եւս ընկրկումը, զիջումը եւ օտարին կապկումը սկսած են տեղ գտնել: Հայկական կարգ մը դպրոցներ «հալոուին» կը տօնեն եւ կրթական մարմիններ լուր կը մնան, ուրիշներ՝ «փիժամա տէ» (գիշերանոցով դպրոց երթալու օր...) կը կազմակերպեն, եւ չի գտնուիր ծնող մը, որ առարկէ, թէ ի՞նչ կ'ընէք եւ ինչո՞ւ կ'ընէք: Բսկ աւարտականներու տարեվերջի տօնախմբութիւնները... բեռնակառքերով շրջիլ, ճչակներով թաղերը թնդացնել, տնօրէնութիւններու քիթին տակ ամբողջ օր մը ջրախաղեր կազմակերպել, անվերջ պոռչտութիւններ եւ անկարգութիւններ կատարել: Ի՞նչն է դաստիարակիչը այս բոլորին մէջ եւ ի՞նչն է օգտակարը, չենք գիտեր: Ասոնց կողքին, կան նաեւ վկայականաց բաշխումի հանդէսներէն աւելի կարեւոր դարձած՝ հանդէսին յաջորդող եւ մինչեւ յաջորդ առաւօտ երկարող աշակերտական բազմահանգրուան տօնախմբութիւններն ու անիմաստ մսխումները (ճաշարան, գիշերային զբօսավայր, ծովափ...), որոնց մասին պէտք է խօսիլ եւ արտայայտուիլ անպայման:

Այս բոլորը եւ տակաւին շատ մը այլ չափազանցութիւններ տեղի կ'ունենան մեր բոլորին աչքերուն դիմաց, յաճախ՝ մեր կամ մեր հարազատներուն մասնակցութեամբ ու մեղսակցութեամբ: Բայց որքա՞ն ճիշդ է այս ընթացքով շարունակելը:

Կ'արժէ անգամ մը մտածել այս բոլորին մասին:

ԸՆԹԵՐՑՈՂ ՄԸ

## **ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

**ՀՈՎԱՆԱԴՈՐՈՒԹԵԱՄԲ՝**

**Գերպ. Տ. Մասիս Ծ. Վրդ. Զօպույեանի**

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝  
ՔՈՒԷՅԹԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ**

**ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ**

**ՍՈՒՐԻԱ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ**

**ՕՐՈՒՄՆ ԲԱՆԱԽՕՍ՝  
ԲԺՂ. Ներսէս Սարգիսեան**

Տեղի կ'ունենայ **Ուրբաթ, 14 Հոկտեմբեր 2016-ին**, երեկոյեան ժամը 8:00 -ին, Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ մէջ, Բուէյթ

սիրով հրաւիրուած էք բոլորդ

**ՔՈՒԷՅԹԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄ**

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

**Լոս Անճելըսի Լիբանանեան Համայնքը Կը Պատուէ Զօրավար Շամել Ռուքոզը**



1 Հոկտեմբերին Կլենտելի «Հիլթըն» պանդոկին մէջ Լոս Անճելըսի լիբանանեան համայնքը պատուեց բանակի յատուկ նշանակութեան գունդի նախկին հրամանատար հազարապետ-զօրավար Շամել Ռուքոզը:

Արմատական ահաբեկիչներու դէմ կոիւնտրուն հոչակ շահած լիբանանցի զօրավարը որոշած է մտնել քաղաքական ասպարէզ եւ այս ծիրին մէջ ձեռնարկած է լիբանանեան սփիւռքը

Ճանչնալու այցելութեանց շարքի մը:

Զօրավար Ռուքոզին պատուելու նուիրուած շաբաթ երեկոյի ձեռնարկին ներկայ եղած են նաեւ Հայ յեղափոխական դաշնակցութեան ներկայացուցիչներ:

**Ղեւոնդ Քինյ. Քիրազեան Արժանացաւ Քահանայական Լանջախաչ Կրելու Իրաւունքին**



4 Սեպտեմբերին Քրեսենթա Հովիտի Հայց. առաքելական եկեղեցոյ մէջ տեղի ունեցած պատարագի ընթացքին թեմի առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեան քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհեց եկեղեցոյ հովիւ Ղեւոնդ քինյ. Քիրազեանին:

Առաջնորդ սրբազանը կարդաց Արամ Ա. վեհափառին կոնդակը եւ խաչով զարդարեց քահանային կուրծքը: Սրբազանը գնահատեց քահանայ հօր անցնող հինգ տարիներուն նուիրեալ ծառայութիւնը եւ նկատել տուաւ, որ հոգեւորականներուն ընծայուած պատիւները զարդարուելու նպատակով չեն, այլ՝ իւրաքանչիւր եկեղեցականի պարգեւուած աստուածատուր եւ անտեսանելի շնորհքներուն խորհրդանիշները, որոնց քահանայ հայրերը արժանի կ'ըլլան իրենց անխոնջ ծառայութեան շնորհիւ:

Ղեւոնդ քինյ. Քիրազեան, իր կարգին, երախտագիտութեան խօսք ուղղեց վեհափառ հայրապետին եւ առաջնորդին, որոնք զինք արժանի նկատած են այս պատիւին:

[www.aztarar.com](http://www.aztarar.com)

## Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի Հանդիպումը Կլենտլյ Քաղաքի Պաշտօնատարներուն Հետ

Վերջերս թեմի առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեան այցելեց Կլենտլյի քաղաքապետարան, եւ հանդիպում ունեցաւ քաղաքապետութեան, ոստիկանութեան ու հրշէջներու բաժանմունքի պատասխանատու պաշտօնատարներու հետ՝ խորհրդակցելու համար որոշ դասաւորումներու մասին, առ ի պատրաստութիւն Արամ Ա. կաթողիկոսի Արեւմտեան թեմ մօտալուստ այցելութեան:

Սրբազանը ընդհանուր տեղեկութիւններ տուաւ վեհափառ հայրապետի այցելութեան ծրագիրին մասին:

Քաղաքապետութեան պաշտօնատարները իրենց կարգին պատրաստակամութիւն յայտնեցին գործակցելու եւ անհրաժեշտ դասաւորումները կատարելու:



Հրաժեշտի պահուն առաջնորդ սրբազանը յուշանուէրներ յանձնեց պաշտօնատարներուն:

## Փրոֆ. Ռեմոն Գեորգեանին Շնորհուած Է Պատուոյ Լեգէոնի Շքանշան



Ֆրանսայի Ազգային կրթութեան նախարարութիւնը Պատուոյ լեգէոնի շքանշանի արժանի դատած է պատմաբան փրոֆ. Ռեմոն-Յարութիւն Գեորգեանը՝ Հայոց պատմութեան նուիրուած իր «օրինակելի եւ ամբողջական» վաստակին համար:

Սեպտեմբեր 27-ին ՀԲԸՄ-ի Փարիզի «Ալէք Մանուկեան» մշակութային կեդրոնին մէջ տեղի ունեցած է յանձնումի արարողութիւնը: Շքանշանը մեծարեալին յանձնած է Թեմական պատգամաւորական ժողովի նախագահ Արա Տէյիրմէնճեան:

Հանդիսութեան ներկայ եղած են բազմաթիւ անձնաւորութիւններ, մեծարեալին բարեկամները, ընտանիքը:

Նշենք, որ Պատուոյ լեգէոնը ֆրանսական ազգային տիտղոսներուն բարձրագոյնն է:

**ԱՅԼԱԶԱՆ**

**Վեց Միալ Սովորութիւններ, Որոնք Կը Վնասեն Աչքերուն**

**1.- Ծիւելը**

Ծիւելու վնասներուն մասին շատ խօսուած է, սակայն քիչեր գիտեն, որ անիկա շատ վտանգաւոր է նաեւ տեսողութեան համար: Ծիւախտին պարունակած թունաւոր նիւթերը կ'աւելցնեն քաթարաքթի հաւանականութիւնը: Ծիւախտը ժամանակի ընթացքին կը նեղցնէ անօթները եւ կը մաշեցնէ զանոնք. այս պատճառով աչքերու արեան մատակարարումը կրնայ վատանալ եւ դուր քանալ լուրջ հիւանդութիւններու:


**2.- Աչքերը շփելը**

Շատեր առտուն, արթննալէ ետք կամ աչքին մէջ փոշի մտնելու պատճառով աչքերը շփելու սովորութիւն ունին: Աչքերը շփելը կրնայ վնասել ծիածանաթաղանթը, ինչ որ կ'աւելցնէ աչքի վարակներու հաւանականութիւնը:



**3.- Արեւի ակնոցներ չգործածելը**

Անդրմանիշակագոյն ճառագայթներու երկարատեւ ազդեցութիւնը սերտօրէն կ'ապուած է ցանցերու տարիքային հիւանդութեան՝ «տեժնէրապիոն մաքիլեր»-ին հետ: Ակնաբուժները տեսաբար կը շեշտեն արեւոտ եղանակին ակնոց կրելու անհրաժեշտութիւնը:



**4.- Համակարգիչի պաստառը**

Համակարգիչին դիմաց երկարատեւ աշխատանքը կրնայ աչքերու յոգնածութեան եւ չորութեան յանգեցնել: Պաստառը կարելի եղածին չափ հեռու պահեցէք ձեր դէմքէն եւ կարճատեւ դադարներ առէք, որպէսզի աչքերը հանգստանան:

**5.- Քիչ քնանալը**

Քունի պակասը (օրական 6 ժամէն պակաս) կրնայ աչքերուն մէջ կարմիր բիծեր յառաջացնել, աչքերը չորցնել եւ տեսողութեան խանգարումներ պատճառել:



**6.- Ջրագրկումը**

Աչքերուն, ինչպէս եւ ամբողջ օրկանիզմին ջուրը չափազանց կարեւոր է առողջական բարդութիւններէ խուսափելու համար: Այս պատճառով ալ ակնաբուժները կը թելադրեն օրական առնուազն 5-7 բաժակ ջուր խմել:



## ՎԵՐԱԲԱՅՈՒՄ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ

Այսու գրով կը յայտարարենք մեր համայնքի անդամներուն, որ Կիրակնօրեայ դպրոցը՝ իր թեւերը լայն բացած, կը սպասէ իր մանուկներուն եւ պատանիներուն, վերսկսելու համար իր դասընթացքները Սրբոց Վարդանանց եկեղեցոյս մէջ:

Այս առիթով, Ուրբաթ, **7 Հոկտեմբերին** Կիրակնօրեայ դպրոցի աշակերտները՝ բացի մանկապարտէզի աշակերտներէն, Ս. Պատարագի ընթացքին պիտի ստանան հաղորդութիւն:

Առ ի գիտութիւն յայտնենք, որ Կիրակնօրեայ կրկան յաճախել Մանկապարտէզի Կոկոն եւ Ծաղիկ դասարաններու մանուկները, որոնց համար նկատի առնուած են առանձին ուսուցչուհիներ: Նոյնպէս կոչ կ'ուղղենք Ազգային Վարժարանիս **բոլոր** կարգերու աշակերտ-աշակերտուհիներուն, մասնակցելու Կիրակնօրեայ դպրոցիս դասընթացքներուն:

Ուստի, Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտ-աշակերտուհիները հաւաքելու համար *պատերը* պիտի սկսին շրջագայիլ յառաջիկայ Շաբաթ՝ **8 Հոկտեմբերին**, առաւօտեան ժամը **9:00**-էն սկսեալ:

Կիրակնօրեայ դպրոցի ժամանակացոյցն է Շաբաթ՝ առաւօտեան ժամը **10:00-12:00**-ը:

ՅԱՐԳԱՆՕՔ՝

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

3 Հոկտեմբեր 2016